

ցել է 82321 ր. 46 կ. մուտք և 33068 ր. 81 կ. ելք, հետևապէս 1892 թ. ֆունկ 1-ն ունէր 49293 ր. 18 կ. կարողութիւն: Հիմնարկութեան օրից սկսած մինչև 1892 թ. օգնութիւն են ստացել 158 ուսանողներ, աշակերտներ, 85 հոգի չքաւորներ: Մի տարուայ մուտք կենդրոնի և բոլոր տեղերի եղել է 298,7 ր. 45 կ.: Իսկ ծախք 244,2 ր. 25 կ.: Ծախքը եղել է այսպէս. ուսումնարան 3307 կ. 63 կ. արհեստներ և թատրոն 305 ր. 61 կ. ուսանողներ 3750 ր. 35 կ. գրականութիւն 40 ր. ընթերցարան 4577 ր. 44 կ. խօսերայի առթիւ 8313 ր. 42 կ. տառապեալներ 886 ր. 66 կ. միւս ծախքերը գիւանական են:

Միամեայ համալսոթ (1892) հաշուից երեւում է, որ ընկերութիւնը (Թիֆլիզում ունեցել է 35 մշտական և 254 դործատէր անդամ. ունեցել է 5 ընդհանուր ժողով. ունի խորհրդի 9 անդամ և 5 փոխ-անդամ: Խորհուրդը ունեցել է 31 նիստ, որտեղ վճռուել և քննուել են 160 խնդիր: Թոշակաւորներ է ունեցել Սերսիսեան դպրանոցում 6 հոգի (185 ր.) Արհեստաւորաց դպրոցում 8 հոգի (415 ր.), Կլասիքեան գիմնազ. 3 հոգի (100 ր.) իգական գիմն. 3 հոգի (97 ր.), զանազան ուսումնարաններում 4 հոգի (32 ր.), չորս ուսանողներ (970 ր.) ընդամենը 2,087: Երբ 1892 խօսերայի համաճարակը անհրաժեշտ էր կացուցանում ընկերութեան շուտափոյթ օգնութիւնը, Խորհուրդը արտակարգ ընդհանուր ժողով է հրաւիրում և որոշում է անձեռնմխելի գումարից 5000 ր. յատկացնել տառապողներին օգնելու, 16 ձիւղերի խորհրդներին բաժնելով այդ փողը ի գործադրութիւն, միայն Արմաւիրն է հրաժարւում իրան յատկացրած 1000 ր. ստանալուց, որի վրայ խորհուրդը աւելացնելով 500 ր. ևս և մի բժշկական մասնախումբ կազմելով ուղարկում է Երեւանեան նահանգը:

Շուշույ ձիւղը ունեցել է 163 անդամ, խորհրդի 8 անդամ, 25 անդամ է նիստի ժողո-

ւուել, մուտք եղել է 2,281 ր. 86 կ., համարեա նոյնքան էլ ծախք:

Բաթումի ձիւղը ունեցել է 68 անդամ, վարչութեան 9 անդամ, 16 նիստ, 2169 ր. 37 մուտք, նոյնքան էլք, որ դործատուել է գլխաւորապէս ուսումնարական նպատակների համար:


Կարսի ձիւղը ունեցել 94 անդամ, 2,384 ր. 79 կ. մուտք, 2,206 ր. 35 կ. ծախք.

Միւս ձիւղերը առանձին կերպով չեն յիշուած: Հաշիւ չեն ներկայացրել Վաղարշապատի և Երեւանի ձիւղերը:

Տեղեկադրին կցուած են 1892 թ. Սարսի 22-ի, ֆուլիսի 22-ի և Հոխեմբերի ընդհանուր ժողովների արձանագրութիւնները և անուանացուցակը անդամների 1892 թ.:

Մ. Վ...

(Կը շարունակուի):



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ (BIBLIOGRAPHIA)

1. Անցեալ տարուայ հրատարակուած գրքերի մասին կարելի է ճիշտ տեղեկութիւն տալու «Հանդէս Ամսօրեայ» թերթից.

2. Մեր գլխաւոր տպարանները և գրալսճառանոցները ունին գրացուցակներ. որ ձրի կազարկուի ամեն մի ցտնկացողի.

3. Գրացուցակ Նոր հրատարակութեանց կազմեց Վահան Գ. Զարդարեան. հրատարակւում է ամէն ամիս և ձրի բաժանուում. հառցէ. Կ. Պոլիս. Սուլթան. Համամ փողոց թ. 5.

4. Մայր ցուցակ մատենի գրադարանի Ներսիսեան հոգեւոր Դպրոցի Հայոց. Թիֆլիս. 1893.

5. Յուշալ հայերէն ձեռագիրների Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր Դպրանոցի. 1893.

6. Բաֆի Կ. Արհիւ Վասպուրականի. Թիֆլիս. 1893. Գ. 50 կ.

7. Հ. Առաքելեան. Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը. Թիֆլիս. 1893. Գ. 20 կ.

8. Հ. Ռ. Սարգսեան. Տեսութիւն Սեդրեա-տրոսի պատմութեան և Մ. Խորենացւոյ վե-նետիկ. 1893.

9. Յովհաննէս Թումանեան. Դաշ-նակներ. Թիֆլիս. 1893. Գ. 5 կ.

10. Ֆոսթէր. Բնախօսութիւն տարրական դասնթացք. 20 նկարներով. Թարգ. գր. Եր-զնկեանց. Թիֆլիս. 1893.

11. Օրացոյց 1894 թ. Էմանուէլ քհն. Նա-զարեանց. Թիֆլիս. Գ. 20 կ.

12. Օրացոյց և գուշակութիւնք օդոյ. 1893 թ. Երուսաղէմ.

13. Օրացոյց 1894 թ. վարարշապատ 1894 թ. Գ. 20 կ.

14. Շէն Թագաւորի աղջիկը գրի առաւ Ս. Քամալեանց, գրական լեզուով Գ. 25 կ. Թիֆլիս.

15. Երեք պատկեր. աշխ. վ. Փափագեա-նի. Բագու. Գ. 5 կ.

16. Դր. Խալաթեան Զենոր Գլակ համե-մատական ուսումնասիրութիւն, վիեննա. 1893 թ. Գ. 1 ֆր. — 40 կ.

17. Խ. Յովհաննիսեանց, Յաւելուած եղիւէի Պատմ. վարդ. Մոսկուա. 1893 թ.

18. Գ. քհն. Մկրտումեան. Ղայթմա-զանց Միքէլ. Մոսկուա. 1893 թ. Գ. 8 կ.

19. Գ. Զուգերման. Պոսիւ, կոմեդիա չորս գործողութեամբ Թարգ. Յ. Ղարաբե-ղեանի. 1893 թ. Թիֆլիս. Գ. 50 կ.

20. Եղիս. Սաիւարտ Ֆիլպսի, Գթու-թեան քոյր. Թարգ. Տ. Գիւլմեքեան. Բաքու. 1893 թ. Գ. 15 կ.

21. Կ. Ապրիլեան. Հայրենիքից դուրս, Թիֆլիս. 1893 թ. Գ. 15 կ.

22. ДРЕВНОСТИ ВОСТОЧНЫЯ труды вост. комиссіи. Т. I. Москва. 1893 Գ. 12 ր. (տես Արարտ. 1893 Յունիս. էջ 569):

23. Н. Марр. Новые материалы по армянской эпиграфикѣ. С Петерб. 1893.

24. Кавказъ. Матеріалы по археоло-гии, собранные экспедиціями Импера-торскаго Моск. Арх. общ. подъ ред. графини Уваровой. выпускъ I. 1888, II. 1889, III. 1893. Москва.

25. Православный палестинскій сбор-никъ. 31-й выпускъ. С. Петербургъ. 1892 г. էջ 179—286 Մառի հրատ. «Թուղթ փանայ պատրիարքի առ Զաքարեայ կաթողիկոս Հա-յոց Մեծայ վան երկու միաւորեալ բնու-թեանց մի անձնաւորութիւն գոլով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և վան ճշմարտա-խօսութեան սուրբ հարցն որ ի Գաղկեդոն:

26. К. Ter-Mkrttschian. Die Paulikaner im by- zantinischen Kaiserreiche. (Պօղիկեանք Բիւզան-դական կայսրութեան մէջ) Leipzig. 1892.

27. H. Dag h b a a s c h e a n. Gründung des Bag- ratidenreiches durch Aschot Bagratuni. Berlin. 1893. (Հիմնարկութիւն Բագրատունեանց իշ-խանութեան Աշոտ Բագրատունու ձեռքով):

18. Untersuchungen und Reisen in Trans- kaukasien, Hoch-Armenien und Kurdistan, v. Dr. W. Belck. (Globus, Band 63. № 22. 2.) (Հե- տախուզութիւնք և ճանապարհորդութիւնք Անդրկովկասում, բարձր Հայքում և Քուրդիս- տանում):

29. Ara: a journal of literature and of Arme- nian patitles and history. edited by I. D. Me- lik - Beglar. Calcutta. (ԱՐԱ. գրական, քաղա- քական և պատմական ամսագիր):

30. Conybeare A collation of the old arme- nian version of Platós lews, book IV (American journal of Philology. vol. XIV. № 3) Պղատո- նի օրինաց չորրորդ գլխի հայերէն Թարգմա- նութեան բաղդատութիւնը):

31. Giunta Giunti. Das Haus Lusigneau. histo- rische Skizze. Uebersetzung aus dem Italienis- chen. Triest. 1894. (Պատմութիւն Լուսինեան տան):

~~~~~